1915 Թ. ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ

1915 Թ. Վանի հերոսամարտի վերաբերյալ ստեղծված է բավականաչափ գրականություն։ Տպագրվել են հիշողություններ, հոդվածներ և աշխատություններ։ Ներկա հոդվածում մենք բերում ենք օտար հեղինակների հաղորդումները, որոնք հաստատում և լրացնում են Վանի ինքնապաշտպանության մասին եղած հայկական աղբյուրները։ Օտար հեղինակների հաղորդումները կարևոր են նաև այն պատճառով, որ չեն սահմանափակվում միայն վկոտորածների ու մարտական գործողությունների նկարագրություններով, այլև գնահատում են դրանք, փորձելով այդ ամենը բացատրել, իհարկե, յուրովի։ Ասել է, թե այդ աղբյուրները բերում են նոր կարծիքներ ու գնահատականներ, պարտադրում քննադատական մոտեցում ու հարուցում բանավեճեր։

Ականատեսներից մեկը՝ ամերիկացի միսիոներ Քլարենս Աշերը, որը երկար տարիներ աշխատել է Արևմտյան Հայաստանում, նշում է, որ հայը պարտավոր էր տանել մահմեդականների բռնությունները, բայց երբ ըմբոստանում էր և ինքնապաշտպանությունից դրդված սպանում էր նրանցից որևէ մեկին, ապա սպանվածի հարազատները վրեժը լուծում էին հայերի բնակավայրի վրա հարձակվելով, կողոպտելով, այրելով և սպանելով անմեղ մարդկանց[1]։ Նա վկայում է, որ 1911 Թ. Վանի կայազորը 8 գումարտակից հասավ 32-ի[2]։ Դա կատարվեց հենց այն շրջանում, երբ Սալոնիկի տրխրահռչակ կոնգրեսում երիտթուրքերի կողմից որոշում էր ընդունվել հաշվեհարդար տեսնել կայսրության տարածքում բնակվող ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ։

1914 Թ. բռնկված առաջին համաշխարհային պատերազմը լոկ պատեհ առիթ հանդիսացավ երիտթուրքերի համար անարգել իրականացնելու իրենց հայաջինջ ծրագիրը։ Առաջին հարվածը հասցվեց Վասպուրականի նահանգին և նրա կենտրոն Վան քաղաքին։

Դեռևս 1914 Թ. օգոստոսին Վասպուրականի նահանգապետ էր նշանակվել Ջևդեթ բեյը, որին Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն անվանում է «Բաշկալեի պայտագործ»՝ իր զոհերին պայտելու համար[3]։ Ջևդեթը վերադառնալով ռազմաճակատից, ակտիվորեն ձեռնամուխ եղավ վերը նշված ծրագրի իրականացմանը։ Նրա գալուստը, ինչպես վկայում է գերմանական բարեգործական միսիայի աշխատակից Սփյորին, ընդունվեց մեծ զգուշությամբ, որովհետև լավ բան չէր խոստանում[4]։ Ինչևէ, հայերը ջերմ ընդունելություն ցույց տվեցին նահանգապետին, և դրանից «հուզված» Ջևդեթը նույնիսկ գրկեց իր նախկին դասընկեր Վռամյանին, վկայում է Ք. Աշերը[5]։ Բայց դա չխանգարեց, որ նահանգապետն իր

---

[1] C. D. Ussher, G. H. Knapp, An American phisician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War, Boston and New York, 1917, p. 156.

[2] *Նույն տեղում, էջ 203։*

[3] Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918 p. 307.

[4] *Հմմտ.* Deutschland und Armenien (1914–1918), Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam 1919, S. 475, *հմմտ.* Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1983, с. 545.

[5] C. D. Ussher, G. H. Knapp, *նշվ. աշխ., էջ 234։*

գործունեությունը սկսի նահանգի հայ բնակչության տեղահանությամբ և կոտորածով։ Ինչպես հայտնի է, զորահավաքի հետևանքով գյուղերում քիչ թվով տղամարդիկ էին մնացել և թուրքական ու քրդական ավազակախմբերը գրեթե անարգել կարողացան իրականացնել իրենց ոճրագործությունը։ Ճիշտ է, եղան վայրեր, ուր հայ բնակչությունը որոշ դիմադրություն ցույց տվեց չարդարարներին, որոնք նման դեպքում առավել անգթաբար էին գործում։ «Երեխաներին սպանում էին իրենց մայրերի գրկում, կանանց մերկացնում և ծեծում էին, փոքրիկ երեխաներին խեղանդամ էին անում։ Գյուղերը հարձակմանը չէին նախապատրաստվել, շատերը չդիմադրեցին, մյուսները դիմադրում էին մինչև իրենց զինամթերքը սպառվում էր»,—վկայում էր օտարերկրացի ականատեսը[6]։

Հայոց Ձորի գյուղերում տեղի ունեցան սարսափելի կոտորածներ։ Ոճրագործները ձիերը վարգով քշում էին աքսորականների խմբերի վրա, սրմբակների տակ տրորելով նրանց[7]։ Շատախում հայերը կատաղի դիմադրում էին չարդարարներին։ Գազազած Ջևդեթը «մսագործների գումարտակի» հրամանատարին հրամայեց. «Գնա Շատախ և բնաջնջիր այնտեղի ժողովրդին»[8]։ Հ. Մորգենթաուի վկայությամբ, միայն երեք օրվա ընթացքում Վանա լճի հյուսիսային շրջանում թուրքերը սպանեցին 24000 հայերի[9], իսկ մինչև մայիս ավերվեցին նահանգի մոտ 100 գյուղեր, որոնց բնակիչները կոտորվեցին[10]։

Իշխանին և Վռամյանին դավադրաբար սպանելով՝ Ջևդեթը կարողացավ Վանը զրկել երկու ականավոր գործիչներից։ Ապա նա վանեցիներից պահանջեց 3000 զինակոչիկներ, բայց հայերը մերժեցին։ Սփյորին մերժման պատճառը համարում է վերը նշված հայերի սպանությունը, որոնցից Վռամյանը օսմանյան պառլամենտի դեպուտատ էր։ Ստանալով նման պատասխան, նահանգապետը սպառնաց հարձակվել քաղաքի հայկական թաղամասերի վրա[11]։

Ինչպես հայտնի է, այս ծանր և սպառնալից իրավիճակում, մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները, վանեցիները որոշեցին դիմել ինքնապաշտպանության։ Ապրիլի 5-ին կազմվում է «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության մարմին»։ Փույթ չէ, որ ուժերի հարաբերակցությունը հայերի օգտին չէր։ Վանեցիներից զենք կարող էին կրել ամենաշատը 1500 հոգի, բայց կար ընդամենը 300 հրացան։ Կռվողների շարքերը համալրվեցին միայն հետագայում նահանգի տարբեր շրջաններից Վանի հայկական թաղամասերում ապաստան գտածների հաշվին։ Սակավ էր նաև զինամթերքը, թեև հետագայում հայերին հաջողվեց կազմակերպել զինամթերքի արտադրությունը՝ օրական 2000 փամփուշտ և նույնիսկ պատրաստել երեք հրասանդ[12]։

---

[6] The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915—16. Documents presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce; with a pref. of Viscount Bryce, London, 1916, p. 36.

[7] C. D. Ussher, G. H. Knapp, Նշվ. աշխ., էջ 238։

[8] Նույն տեղում, էջ 237։

[9] Henry Morgenthau, Նշվ. աշխ., էջ 297։

[10] Arthur Beylerian, Les Grandes Puissances l.' Empire Ottoman et les Armeniens dans les Archives Françaises (1914—1918), Paris, 1983, p. 25 (Armenian Review. Boston, p. 45), Winter 1984, vol. 37, № 4.

[11] Deutschland und Armenien . . . , S. 475.

[12] The Treatment of Armenians..., էջ 35, G. H. Knapp, The Tragedy of Bitlis: Being mainly the Narratives of Grisel M. McLaren and Mvrtel O. Shane, New York. 1919, p. 16; C. D. Ussher, G. H. Knapp, Նշվ. աշխ., էջ 263; John Otis Barrows, In the Lande of Ararat, New York, 1916, p. 128; Johannes Lepsius, Der Todesgang des Armenischen Volkes. Bericht über der Schicksal der Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam, 1919, S. 87.

Աղբյուրները հակառակորդի զորքերի տարբեր քանակություն են նշում՝ 5000[13], 6000[14] և 12000[15] զինվոր։ Վերջին վկայությունը ավելի հավանական է թվում, քանի որ նրա հեղինակը՝ Ռաֆայել դե Նոգալեսը, լինելով գերմանական բանակի սպա, մասնակցել էր Վանի պաշարմանը։ Բացի այդ, հայկական թաղամասերի շուրջը տեղադրված էին մեկ տասնյակից ավելի թնդանոթ։

Ընդհարումից խուսափելու համար հայերը դիմեցին ամերիկյան միսիոներներ Յարոուին ու Աշըրին, խնդրելով հետ պահել Ջևդեթին, տեղիք չտալ ընդհարման և գործն ավարտել խաղաղությամբ։ Վանեցիները հատկապես մեծ հույսեր էին կապում Ք. Աշըրի հետ, քանի որ նա երկար տարիներ եղել է Ջևդեթի ծնողների անձնական բժիշկը և բարեկամական հարաբերությունների մեջ էր նրանց հետ։ Հանդիպման ժամանակ Ջևդեթը հայերին ամբաստանեց խռովության մեջ և սպառնաց. «Եթե հայերը մի կրակոց արձակեն... ես քաղաքը ամբողջովին կոչնչացնեմ, չթողնելով իմ ծնկից բարձր երեխա»[16]։ Նա միաժամանակ առաջարկեց միսիոներների «ապահովության» համար, նրանց շենքերում տեղավորել 50 զինվոր և մեկ թնդանոթ՝ հայերի «հարձակումից» պաշտպանվելու համար։ Սակայն միսիոներները մերժեցին[17]։

Ապրիլի 7-ին թուրք զինվորները հարձակման անցան... հայ կանանց վրա։ Երկու հայեր փորձեցին նրանց պաշտպանել։ Սակայն թուրքերը կրակ բացեցին և սպանեցին նրանց։ Այս ընդհարումը տեղի ունեցավ Սփյորիի աչքի առջև։ Նա վկայում է, որ ընդհարումը նախաձեռնողը թուրքերն էին[18]։

Ջևդեթը հրամայում է սկսել հայկական թաղամասերի ռմբակոծությունը։ Կրակոցները ազդանշան են ծառայում, որ թուրքերը հարձակվեն քաղաքի արվարձանում ապրող հայերի տների վրա։ Եվ երբ Ռ. դե Նոգալեսը թուրք պաշտոնյայից պահանջում է դադարեցնել կոտորածը, վերջինս պատասխանում է, որ ինքը կատարում է նահանգապետի հրամանը։ Կենդանի մնացած հայերն այս ու այն կողմ էին վազում, ճգնելով փրկվել կոտորածից։ Մի խումբ երիտասարդներ, թիկունքը դեմ անելով պատին, հուսահատորեն փորձում էին պաշտպանվել ջարդարարներից։ Սակայն, ի վերջո, բոլորն էլ զոհվում են ոճրագործների սրերից ու գնդակներից, որից հետո ամբոխը սկսում է թալանել հայերի տները և «երբ հայ էին գտնում, յաթաղանի հարվածով կտրում էին... կոկորդը»[19],—գրում է Նոգալեսը։

Վանի թաղամասերում՝ Այգեստանում և Քաղաքամեջում ամրացած հայերը կառուցում են պաշտպանական ամրություններ, փորում խրամատներ և անցուղիներ։ Միայն Այգեստանում կառուցվել էին 80 պաշտպանական դիրքեր[20]։ Հայերն աշխատում էին խնայողաբար օգտագործել զինամթերքը, թշնամու բազմաթիվ կրակոցներին պատասխանում էին հատուկենտ կրակոցներով և, ինչպես վկայում է Ք. Աշըրը, զարմանալի ճշտությամբ[21]։ Նա նաև նկարագրում է, թե ինչպես փոքրիկ երեխաները նույնպես մասնակցում էին հերոսամարտին, կատարելով սուրհանդակի դեր՝ շտաբի և դիրքերի միջև։ Նրանցից առավել խիզախները, վերցնելով նավթով ներծծված

[13] H. Morgenthau, նշվ. աշխ., էջ 299:

[14] Deutschland und Armenien, նշվ. աշխ., էջ 48։

[15] Rafael de Nogales, Memoirs of Soldier of Fortune, New York, 1932, p. 271.

[16] G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 16, The Treatment of Armenians, p. 34.

[17] C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 239—240։

[18] Deutscland und Armenien..., S. 476; C. D. Ussher, G. H. Knapp. նշվ. աշխ., էջ 247։

[19] Rafael de Nogales, Four years beanath the Crescent, New York, 1926, p. 64.

[20] The Treatment of Armenians..., էջ 35։

[21] C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 250,

լաթերը, մոտենում էին թուրքերի գրաված տներին, վառում լաթերը, ֆեսով կամ գլխարկով հովհարում, մինչև որ գուռը բռնկվում և ծուխը դուրս էր քշում դիրքավորված թուրքերին։ Երբ մանչուկներից մեկը վերադառնալիս վիրավորվում է, նրան փրկում է մի արիասիրտ աղջիկ, որը թշնամու կրակի տակ նրան հասցնում է մինչև հայկական դիրքերը։ Իր այդ քաջագործության համար աղջիկը պարգևատրվում է մեդալով[22]։

Ք. Աշըրի վկայությամբ Վանի ինքնապաշտպանության զինվորական խորհուրդն արգելում է օգտագործել ոգելից խմիչքներ, հայհոյել թշնամու կրոնը, կրակել հակառակորդի կանանց ու երեխաների վրա։ Տպագրվում է ռազմական տեղեկագիր, որը նկարագրում է օրվա կարևոր դեպքերը, հրապարակում է հրամանները, հայտարարությունները և այլն[23]։ Իր հիշողություններում Ք. Աշըրը հետաքրքրական տեղեկություններ է թողել պաշտպանների առօրյայի վերաբերյալ։ Նա վկայում է, որ բոլորը զբաղված էին որևէ գործով, անգործ մարդ չկար։ Կանայք ուտելիք էին պատրաստում, խնամում հիվանդներին և վիրավորներին։ Տղամարդիկ կառուցում էին տարբեր տեսակի պաշտպանական ամրություններ, վերականգնում թշնամու ավերածները։ Բոլորը իրենց գործը կամ հանձնարարությունը կատարում էին լավագույն ձևով։ «Ուրախ, հույսերով լի ոգի էր տարածված։ Մահացածի համար ոչ մի սուգ, ոչ մի սովորական արևելյան լաց ու կոծ։ ...Նրանք բարձրացնում էին իրենց գլուխները և ասում. «Ավելի լավ է տասը օր ազատություն և հետո մեռնել, քան մեռնել որպես ստրուկ, ինչպես մենք էինք»,—վկայում է Ք. Աշըրը[24]։

Թուրքական բանակի և հայ ինքնապաշտպանների միջև մղվող մարտերի մասին հետաքրքրական տեղեկություններ է թողել նաև Ռ. դե Նոգալեսը՝ թուրքական բանակի գերմանացի հրահանգիչը։ Նա ևս նշում է հայերի դիպուկ նշանառությունը։ Ռ. դե Նոգալեսը վկայում է, որ հայերի կրակը դիպուկ էր հատկապես այն ժամանակ, երբ նրանք օգտագործում էին մաուզեր սիստեմի ատրճանակներ։ Նա դրանք անվանում է սարսափելի զենք հայերի ձեռքին և այդ ատրճանակների կրակի արդյունավետությունը համեմատում է դնգացրի հետ, որովհետև հայերը սովորություն ունեին միևնույն թիրախին արձակել ոչ թե մեկ, այլ մի քանի գնդակ իրար հետևից։ Ռ. դե Նոգալեսը նշում է հայերի պատրաստած հատուկ ջաղափների մասին, որոնցով նրանք կարողանում էին թշնամու համար անակնկալ կերպով անցքեր բանալ, դրանք օգտագործելով որպես հրակնատներ[25]։ Նա Վանի մարտերն անվանում է «բացառիկ կռիվ», «հրեղեն սպանդանոց»[26]։ «Ես չէի կարող չսարսռալ, երբ ամեն անգամ ամրոցի վերևից նայում էի այրված գյուղերին (հայկական—Ռ. Ս.) և կռավող սև ագռավների երամներին, որոնք շների հետ վիճարկում էին հայերի ու թուրքերի անկենդան մարմինները, որոնցով ծածկված էին Վանի նեղ փողոցները և մերձակա դաշտերը»,—գրում է Ռ. դե Նոգալեսը[27]։ Նա վկայում է նաև, որ երկուստեք համառ ու անզիջում պայքար էր ընթանում և իրեն ամեն անգամ զարմացնում էր հայերի կատաղի դիմադրությունը։ Որպես օրինակ, նա նկարագրում է, թե ինչպես մի գումարտակի գլուխ անցած կարողացավ գրավել մի քանի տներ, որտեղ տեղադրվեցին թնդանոթներ։ Դրանք ուղիղ նշանառությամբ կրակելով, մինչև հիմքը քարուքանդ արեցին հայկական մի շարք ամրություններ։ Սակայն դրանից հետո էլ հայերը շարունակում էին փլատակների վրա անզիջում մարտնչել։ Եվ երբ Ռ. դե Նոգալեսն իր ուժերը տանում է հարձակ-

---

22 C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 250:

23 Նույն տեղում, էջ 251։

24 Նույն տեղում, էջ 252—253։

25 R. de Nogales, Four years beanath the Crescent..., p. 68.

26 Նույն տեղում, էջ 70, Նույնի՝ Memoirs of Soldier of Fortune, էջ 270.

27 Նույնի՝ Memoirs of Soldier of Fortune, p. 270.

ման, հույս ունենալով հեշտությամբ գրավել այդ փլատակները, գրոհը ձախողվում է։ Զինվորների մեծ մասը կամ սպանվում կամ վիրավորվում է[28]։ Նույն հեղինակի վկայությամբ ապրիլի 26-ին հատկապես կատաղի մարտեր են տեղի ունենում շուկայի շրջանում, ուր թուրքերը, մեծ կորուստներ տալով, հետ են շպրտվում և հազիվ են փրկվում վերջնական ջախջախումից[29]։

Ապրիլի 28-ին, երբ հայերին հաջողվեց պայթեցնել Ռեջիդիե զորանոցը, որտեղ թուրքական մի քանի գումարտակ իրենց հսկողության տակ էին պահում Այգեստանի արվարձանների մեծ մասը, գաղազած Ջևդեթ բեյը հրամայեց Չերքեզ Ահմեդին հարձակվել մերձակա հայկական գյուղերի վրա, ուր մնացել էին միայն կանայք և երեխաները։ Ահմեդն այնպիսի վայրագություններ գործեց, որ «նույնիսկ քրդերը զարհուրեցին՝ այդ դիվային բարբարոսությունը տեսնելով»[30]։

Ըստ Ռ. դե Նոգալեսի, թուրքական ուժերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. միջնաբերդում գտնվում էին երկու վաշտ, քրդերի մեկ գումարտակ և օսմանցի կամավորներ՝ թնդանոթներով։ Արևելյան մասում տեղ էին գրավում երեք գումարտակ և հեծյալ ժանդարմները, իսկ հարավ-արևմտյան մասում՝ կովկասյան կամավորները (Չերքեզ Ահմեդի ավազակները)։ Արևելյան և հարավ-արևելյան մասում տեղակայված էին կանոնավոր ողջ բանակը և մի քանի թուրքական գումարտակներ։ Մնացած ուժերն ապաստանել էին ժանդարմների զորանոցներում։ Կային նաև 1200—1300 քրդեր՝ Սուլեյման բեյի գլխավորությամբ[31]։

Ռ. դե Նոգալեսի հուշերում կա Ջևդեթ բեյի և նրա ամենամերձավոր գործակիցների բավականին հետաքրքիր նկարագիրը։ Նկարագրված է նահանգապետի տանը տեղի ունեցած ընթրիքը։ Նա նշում է, որ սեղանին դրված էր թանկարժեք արծաթե սպասքեղեն, որն իր նրբագեղությամբ աչքի կընկներ նույնիսկ Եվրոպայում։ «Նահանգապետը նստած էր իմ դիմաց, երեկոյան լավ զգեստով, սպիտակ փողկապով և ծաղիկը կոճականցքի մեջ ...կապիտան Ռաշիդ բեյը իմ ձախ կողմում էր՝ անթերի համազգեստով։ Վերջինս լազերի գումարտակի հրամանատարն էր և նահանգապետի աջ ձեռքը, նրա գաղտնի կարգադրություններ կատարողը։ Նրան այնտեղ տեսնելով նրբին և բարեկիրթ, ես ինչպես կարող էի պատկերացնել, որ այդ նրբագեղորեն մանիկյուր արված և գոհարազարդ ձեռքերը կարող էին թրջված լինել մեծ քանակությամբ անմեղ զոհերի արյունով։ Ջենտլմեն կոչվող Ահմեդ բեյը... նստած էր իմ աջ կողմում, հագնված էր լավ տվիդից կարված հագուստ։ Նա կատարելապես տիրապետում էր մի քանի լեզուների, անդամ էր Կոստանդնուպոլսի որոշ լավագույն ակումբների և շատ տարիներ էր անցկացրել Լոնդոնում։ Իր արիստոկրատական շարժուձևով և իր, ավելի ճիշտ, փայլուն արտահայտչականությամբ, նրան կարելի էր մի պճնամոլի տեղ դնել, որը Հայդ Պարկի ծառուղու երկարությամբ լծաքաղաք է քշում։ Բայց և այնպես այս Ահմեդ բեյը, ոչ այլ ոք է, եթե ոչ տխրահռչակ Չերքեզ Ահմեդը, որը հետո սպանեց Զոհրապին, Վարդգեսին և Դաղավարյանին (Տաղավարյան—Ռ. Ս.) և մեկ տարի անց Դամասկոսում մահապատժի ենթարկվեց Ջեմալ փաշայի կողմից, որը երկյուղում էր, թե այդ սպանությունում կարող է բացահայտվել իր սեփական հանցանքը»[32]։

Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը 1915 թ. ապրիլի 24-ի իր զեկույցում հաղորդում է Վանում բռնկված «ապստամբության» մասին, նշելով, որ թուրքերի կորուստները կազմում են 20 սպանված։ Վեր-

---

28 Նույնի՝ Four years beanath the Crescent, p. 95:

29 Նույն տեղում, էջ 84։

30 Նույն տեղում, էջ 85—86։

31 Նույն տեղում, էջ 74։

32 Նույն տեղում, էջ 73—74։

ջում դեսպանը հույս էր հայտնում, որ Պարսկաստանից վերադարձած Ջևդեթ բեյը «հանգստություն կհաստատի»[33]։

Ք. Աշբրը վկայում է, որ կռվի առաջին օրերին հայերը կոչ են հղում Վանի թուրքերին, հայտարարելով, որ իրենք մարտնչում են ոչ թե թուրք ժողովրդի, այլ Ջևդեթի դեմ։ «Վալիները գալիս և գնում են, սակայն երկու ժողովուրդները պետք է շարունակեն ապրել միասին...»,—ասված էր կոչում։ Վերջում հայերը հույս էին հայտնում, որ Ջեդեթի հեռանալուց հետո կրկին բարեկամական և խաղաղ հարաբերություններ կհաստատվեն հայ և թուրք ժողովուրդների միջև[34]։

Հայ ինքնապաշտպաններն աննկուն կերպով հետ էին մղում թշնամու գրոհները, երբեմն իրենք էին դիմում հակագրոհների, մեծ կորուստներ պատճառելով նրան։ Թուրք զինվորներն ամերիկյան միսիոներներին բողոքում էին, թե. «Այսպես չեն կռվում։ Մենք ոչինչ չենք կարող անել այդ հայերի դեմ։ Նրանք կռվում են իրենց պատերի հետևից, մենք չենք կարողանում տեսնել նրանց և չգիտենք, թե ուր կրակենք։ ...Նրանք սպանում են մեզ»[35]։ Որպեսզի ինչ-որ ձևով արդարացնեն իրենց անհաջողություններն օտարերկրացիների մոտ, թուրքերը հայերին մեղադրում էին թունավոր և պայթուցիկ գնդակներ օգտագործելու մեջ։ Եվ երբ ամերիկյան միսիոներները հերքում են անհիմն փաստարկները, ապացուցելով, որ նման տեսակի գնդակներ ունեն միայն թուրքերը, վերջիններս դադարում էին այդ մասին խոսել[36]։

Ինչպես վկայում է Ք. Աշբրը, թուրքական բանակի բարոյական ոգին բավականին ցածր էր։ Դրա պատճառներից մեկը նա համարում է այն, որ Ջևդեթը ողջ ավարը քրդերին էր խոստացել[37]։ Ի վիճակի չլինելով միայն ռազմական ուժով կոտրելու հայերի դիմադրությունը, նահանգապետը որոշում է սովի մատնել նրանց։ Այդ նպատակով նա հրամայում է Վանի շրջակայքի գյուղերից հավաքել կենդանի մնացած կանանց և երեխաներին ու քշել դեպի հայկական դիրքերը։ Վանեցիները սիրով ընդունում են իրենց դժբախտ հայրենակիցներին, հնարավորին չափով նրանց ապահովելով սնունդամթերքով։ Վանի հայկական թաղամասերում ապաստանած հայերի թիվը հասնում է 55000-ի[38]։

Հայերին մեծ վնաս էր հասցնում թուրքական հրետանին։ Միայն մեկ օրում հրետանակոծության հետևանքով սպանվում կամ վիրավորվում են 40 կանայք և երեխաներ[39]։ Ռ. դե Նոգալեսի վկայությամբ, թուրքական հրետանին երբեմն նաև «օգնում» էր հայերին. «Ռումբերն անցնում էին տների կավե պատերի միջով, առանց քանդելու դրանք, և հայերը երախտապարտ էին մեզ, որ մենք անցք ենք բացել, որի միջով նրանք կկարողանան կրակել»[40]։

Հակառակորդին անընդհատ լարված վիճակում պահելու և նրանց զինամթերքը սպառելու համար հայերը դիմում էին զանազան հնարքների։ Մի գիշեր նրանք փոքրիկ շան վզից կապում են վառվող մոմով լապտեր և հարայ-հրոցով ու կրակոցներով քշում դեպի թուրքական դիրքերը։ Թշնամին, լսելով աղմուկն ու կրակոցները և տեսնելով մթության մեջ այս ու այն կողմ նետվող լույսը, կրակ է բացում, վատնելով մեծ քանակությամբ զինամթերք։

---

[33] Deutschland und Armenien, s. 51.

[34] The Treatment of Armenians, p. 35.

[35] G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 31.

[36] C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 275, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 33.

[37] J. O. Barrows, նշվ. աշխ, էջ 135.

[38] C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 275.

[39] J. O. Barrows, նշվ. աշխ., էջ 135.

[40] G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 30—31.

Մեկ այլ գիշեր վանեցիները Թուրքերից խլված ձիու պոչից կապում են երկաթյա դատարկ տակառ և գոռում-գոչյունով ու կրակոցներով քշում դեպի Թշնամու դիրքերը։ Խելահեղ արշավող ձին մի այնպիսի ահավոր դղրդյուն ու աղմուկ է բարձրացնում, որ ասես հաղարավոր մարդիկ են վազում։ Թուրքերը փոթորկալից կրակ են բացում, կարծելով, Թե հայերը կամ ռուսներն են հարձակվում[41]։

Ք. Աշըրը նկարագրում է մեկ այլ դեպք, երբ 44 հայեր դիմադրում էին 500 բիթլիսցի քրդերի հարձակմանը։ Վերջիններիս Ջեղեթը հրապուրել էր Թալանով, իսկ սեփական շեյխերը հավատացրել էին, որ նրանք անխոցելի են անհավատների գնդակներից։ Եվ երբ նրանց հարձակման Թափից ինքնապաշտպանները մի պահ ընկրկում և սկսում են նահանջել, քրդերին Թվում է, որ հաղթանակն իրենցն է։ Այդ ժամանակ պահին Արամ Բորողանյան անունով վիրավոր մի հայ մարտիկ ամբողջ հասակով կանգնելով սկսում է կրակել Թշնամու վրա, գետին տապալելով նրանցից վեցին։ Տեսնելով հայ մարտիկի արիությունը և համոզվելով, որ իրենք անխոցելի չեն, Թշնամին սարսափահար սկսում է նահանջել։ Վրա հասած հայերը կրակ են բացում, և քրդերի նահանջը վերածվում է փախուստի, որի ժամանակ նրանք տալիս են 33 սպանված[42]։

Ինչպես վկայում է Ք. Աշըրը, ձախողվում է նաև Թուրքերի մտադրությունը՝ ստորգետնյա ուղի անցկացնել ոստիկանական զորանոցից մինչև Արարք կոչվող Թաղամասը։ Պատահաբար այն հայտնաբերելով, հայերը ներխուժում են զորանոց և հրդեհում[43]։

Ամեն անգամ, երբ Թուրքական որևէ ձեռնարկում անհաջողության էր մատնվում կամ հայերն իրենց գործողություններով վնաս էին հասցնում հակառակորդին, Ջևդեթը հրամայում էր ավելի կատաղի ոմբակոծել հայկական Թաղամասերը։ Դրանից անմասն չեն մնում նաև ամերիկյան միսիոներների շենքերը, չնայած այն հանգամանքին, որ միսիոներները չեզոք պետության քաղաքացիներ էին։ Հարկավ, մի ողջ ժողովուրդ ոչնչացնող վանդալների համար այդ չեզոքությունը գրոշի արժեք չուներ։ Ռ. դե Նոգալեսի վկայությամբ, միսիան ոմբակոծության ենթարկվեց Ջևդեթի հրամանով[44]։ Հավանաբար նահանգապետն այդ քայլին դիմում է իր համար վտանգավոր վկաներից ազատվելու նպատակով, քանի որ ռուսական բանակը և հայ կամավորական ղնդերը սրընթաց մոտենում էին Վանին։ Շուտով սկսվում է Թուրքական զորքերի նահանջը։ Մի ամբողջ ամիս՝ ապրիլի 7-ից մինչև մայիսի 6-ը տևած Վանի հերոսամարտն ավարտվում է։

Ըստ էրզրումում՝ գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերի, Թուրքական կորուստները կազմում էին 1000 սպանված, իսկ հայերինը՝ 300[45]։ Թուրքական կողմի կորուստներում հավանաբար հաշվի չի առնված մահմեդական խաժամուժը, որը, ինչպես հայտնի է, օգտագործվում էր որպես «Թնդանոթի միս»։

Թալեաթ փաշան իր հուշերում Վասպուրականի հայ բնակչությանը մեղադրում է կանխամտածված ապստամբության մեջ և նշում, որ Վանում նախահարձակ են եղել հայերը, որոնք ոչնչացրել են վարչական մի շարք շենքեր, կոտորել քաղաքի մահմեդական բնակչությանը։ Որպեսզի ինչ-որ ձևով արդարացնի մինչև ատամները զինված Թուրքական բանակի անհաջողությունները, Թալեաթը Վանի հայ մարտնչողների Թիվը հասցնում է 5000-ի[46]։ Ժամանակակից Թուրք պատմաբանները ևս ճգնում են ապացուցել,

---

41 C. D. Ussher, G. H. Knapp, Նշվ. աշխ., էջ 255—256։
42 Նույն տեղում, էջ 257։
43 Նույն տեղում։
44 R. de Nogales, Memoirs of Soldier of Fortune..., s. 270; Dikran H. Boyajian, The case for a forgotten Genocide, New Jersey. 1972, p. 425.
45 Deutschland und Armenien, s. 65.
46 Թա'լաթ փաշայի հուշերը, Երևան, 1963, էջ 71 (ձեռագրի իրավունքով)։

որ հայերը հարձակվել են, իսկ թուրքերը պաշտպանվել։ Վկայակոչվում է Ջևդեթի զեկույցներից մեկը, ուր մասնավորապես հաղորդվում էր, որ ապրիլի 21-ին հայերի կողմից հարձակում է ձեռնարկվել ամրոցը գրավելու համար և որ իրենից մեծ ջանքեր են պահանջվել «հետ մղելու այդ անիծյալ մարդկանց (հայերին—Ռ. Ս.)», որոնք ողջ գիշեր գրոհել են թուրքական դիրքերը[47]։

Ըստ թուրք պատմաբան Կամուրան Գյուրունի, Վանում նախապատրաստվող «ապստամբության» մասին Ջևդեթին հայտնի է դարձել դեռևս 1914 թ. նոյեմբերի 29-ին[48]։ Խեղաթյուրելով իրողությունը, հեղինակը պնդում է, որ Վասպուրականի նահանգն ամբողջովին հեղեղված էր «հայկական բանդաներով»։ Սակայն որպես ապացույց նա նորից ներկայացնում է Ջևդեթի մարտի 20-ի հեռագիրն այն մասին, թե «նահանգի բոլոր մասերում ղինված բախումները շարունակվում են... ենթադրվում է, որ ապստամբների թիվը 2000-ից ավելի է»։ Ապրիլի 25-ի թվակիր մեկ այլ հեռագրում նահանգապետը հաղորդում է, որ «ապստամբները սկսել են կրակ բանալ Վանի հայկական թաղամասի մոտ գտնվող մեր ոստիկանատան և մահմեդականների տների վրա։ Մենք դիմադրում և պաշտպանվում ենք»։ Ալի Իհսան փաշան ևս նույն ոգով ամբաստանում է վանեցիներին, թե նրանք իրենց «ապստամբությամբ» նպաստել են Դիլմանի մոտ ռուսական բանակի հաղթանակին։ Իսկ Էնվերը Թալեաթից պահանջում է ոչնչացնել Վանը։ Նա ռուսներին մեղադրում է մահմեդական բնակչությանն աքսորելու համար, առաջարկելով նույն կերպ վարվել հայերի հետ[49]։

Անդրադառնալով հայերի կոտորածներին, թրքասեր Ռ. դե Նոգալեսը ևս գրանցում մեղադրում է «հնչակյան և ռամկավար էքստրեմիստ կուսակցություններին»[50]։ Նա կռվող հայերի թիվը հասցնում է 30000-ի[51], հերքում է թուրքական կանոնավոր բանակի մասնակցությունը կոտորածներին[52]։ Սակայն փաստերի ճնշման տակ, այդ արկածախնդիրը ստիպված է ընդունել, որ կոտորածի ազդանշանը Թալեաթի հեռագիրն էր. «Այրել, ավերել, սպանել»[53]։ Ըստ նրա, պաշարման ընթացքում հայկական թաղամասերի վրա արձակվել է 16000-ից ավելի արկ[54]։ Այն ողջ արհավիրքից հետո, որ պատահեց հայ ժողովրդի հետ, Ռ. դե Նոգալեսը կեղծ ափսոսանքով գրում է. «Եթե հայերն ավելի ջրջահայաց լինեին, հավանաբար այսօր նրանք կղեկավարեին Թուրքիան»[55]։

Գերմանական դիվանագիտական աղբյուրների հաղորդագրությունները ևս չէին կարող ամբողջապես ստույգ լինել, քանի որ սկզբնական շրջանում բացառապես հիմնված էին դաշնակից թուրքական իշխանությունների տրվյալների վրա[55]։ Այսպես, ապրիլի 30-ի զեկուցագրում՝ ուղղված ռայխսկանցլերին, գերմանական դեսպան Վանգենհայմը հաղորդում է, որ թուրքերի կողմից ոչ մի կոտորած չի եղել, և որ Վանի հայերի ու ռուսական հրամանատարության միջև գոյություն ունի կապ[57], և ընդհարումը Ոստանից և Շատախից անցել է Վան՝ վերածվելով ապստամբության[58]։

---

[47] Documents on Ottoman-Armenians, vol. 2, Ankara, 1975, p. 26.

[48] Kamuran Gürün, The Armenian file. The Myth of innocence exposed, London. 1985, p. 96.

[49] Նույն տեղում, էջ 198։

[50] R. de Nogales, Four years beanath the Crescent..., p. 27.

[51] Նույնի՝ Memoirs of Soldier of Fortune, p. 271.

[52] Նույնի՝ Four years beanath the Crescent..., s. 22.

[53] Նույն տեղում, էջ 147։

[54] Նույնի՝ Memoirs of Soldier of Fortune, p. 147.

[55] Նույնի՝ Four years beanath the Crescent..., p. 27.

[56] Deutschland und Armenien, s. XV.

[57] Նույն տեղում, էջ 58։

[58] Նույն տեղում, էջ 51։

Ք. Աշրրն իր հուշերում մերկացնում է Ջևդեթի այն կեղծ հայտարարությունը, թե իբր հայերը կոտորել են 55000 մահմեդական։ «Հիսունհինգ հազար հայերի կոտորածը հաղորդում է (Ջևդեթը—Ռ. Ս.) որպես հիսունհինգ հազար մահմեդականների կոտորած հայերի կողմից»[59]։ Ք. Աշրրի կինը՝ Էլիզաբեթը, իր նամակներից մեկում պարզորոշ գրում է. «Չնայած, որ վալին այդ (ինքնապաշտպանությունը—Ռ. Ս.) անվանում է ապստամբություն, այն իրապես փորձ էր հայերի կյանքը և տները պաշտպանելու համար»[60]։ Ամերիկյան երկու միսիոներուհիներ վկայում են, որ Ջեդեթն ինքը հրահրեց հայերին, որպեսզի հնարավորություն ունենա նրանց մեղադրելու ապստամբության մեջ[61]։ Վերը նշվածը հաստատում է նաև ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն[62], որը երիտթուրքական ղեկավարության հետ իր հանդիպումների ժամանակ փորձում էր ապացուցել թուրքական իշխանությունների գործողությունների անօրինականությունը։ Ամեն անգամ, հարդարացումն իրենց կատարած ոճիրների, Թալեաթը, Էնվերը և մյուսները բերում են Վանի «հեղափոխականների դավաճանության» օրինակը։ Դեսպանը գրում է, որ «հայերը պարզապես որոշել էին փրկել իրենց կանանց պատիվը և իրենց սեփական կյանքը, այն բանից հետո, երբ թուրքերը կոտորեցին նրանց հազարավոր հարևաններին, նախանշելով այն ճակատագիրը, որը սպասում էր նրանց»[63]։ Թալեաթի հետ մի զրույցի ժամանակ Հ. Մորգենթաուն ընդգծում է, որ ոչ մի կերպ չի կարելի արդարացնել թուրքական իշխանությունների հակամարդկային վերաբերմունքը հայ կանանց և երեխաների նկատմամբ, եթե նույնիսկ մի խումբ հայեր դավաճանել են։ «Այդ բաներն անխուսափելի են»[64],—պատասխանել է Թալեաթը դեսպանին։

Անգլիացի նշանավոր պետական գործիչ, իրավաբան և պատմաբան Ջեյմս Բրայսը, անդրադառնալով Վանի հերոսամարտին, գրում է. «Հայերը Վանում չեն ապստամբել։ Հայերը պարզապես պաշտպանվել են քաղաքի թաղամասում, ապա պաշարվել և հարձակման ենթարկվել թուրքական զորքերի կողմից»[65]։

Ինչ վերաբերում է հայերի կողմից մահմեդականների «կոտորածին», ապա դա ևս ստոր կեղծիք է։ Երբ ռուսական բանակը գրավեց Վանը, ամերիկյան միսիոներները հեռացրեցին իրենց մոտ ապաստանած 6000 հայ փախստականներին, օթևան տալով մոտ հազար թուրք կանանց և երեխաների, որոնք չէին հասցրել հեռանալ կամ լքվել էին թուրքական բանակի կողմից[66]։ Հատկանշական է, որ հայ կամավորները միսիոներների մոտ են բերում մի վիրավոր թուրքի, որը բարձրաձայն պարծենում էր, թե ինքը 20 հայ է սպանել[67]։

Հ. Մորգենթաուն գրում է, որ փոխանակ կռվելու ռուսական բանակի դեմ, թուրքերն իրենց զենքը շրջեցին հայ կանանց, երեխաների և ծերերի վրա[68]։ Թալեաթը դեսպանի հետ զրուցելիս հայերի մասին ասում է. «Երբ մենք հրամայեցինք զինաթափվել, այդ մարդիկ հրաժարվեցին։ Նրանք դիմադրեցին մեզ Վանում և Զեյթունում, նրանք օգնեցին ռուսներին։ Կա մի ուղի միայն, որով կարող ենք ապագայում պաշտպանել մեզ ընդդեմ նը-

---

59 C. D. Ussher, G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 329։

60 J. O. Barrows, նշվ. աշխ., էջ 128։

61 G. H. Knapp, նշվ. աշխ., էջ 15—16։

62 H. Morgenthau, նշվ. աշխ., էջ 327։

63 Նույն տեղում, էջ 300։

64 Նույն տեղում, էջ 335—336։

65 The Treatment of Armenians, p. 627.

66 The Treatment of Armenians, p. 41. J. Lepsius, նշվ. աշխ., էջ 97, Deutscland und Armenien, p. 483.

67 Deutschland und Armenien..., s. 483.

68 H. Morgenthau, նշվ. աշխ., p. 297.

բանց... պարզապես աքսորել»[69]։ Ամերիկյան դեսպանի կարծիքով, Ջևդեթը հայ զորակոչիկներ էր պահանջում ոչ թե բանակի կարիքներից ելնելով, այլ նրանց կոտորելու նպատակով[70]։

Այսպիսով, հանձին օտար աղբյուրների մեծամասնության, մենք ունենք Վանի հերոսամարտը լուսաբանող պատմական հավաստի վավերագրեր, որոնք հնարավորություն են տալիս հերքել այն անհեթեթությունները, որոնք առաջ են քաշվել և քաշվում անցյալի և ժամանակակից թուրքական պատմագիտության մեջ։ Վերը բերված անհերքելի վկայություններն ամբողջապես հաստատում են հայկական աղբյուրների այն միաբերան պնդումները, թե Վանի և Վասպուրականի բնակչությունը ենթարկվել է կանխամտածված հալածանքի, խոշտանգումի, կոտորածի, աքսորի, որոնց տրամաբանական պատասխանը պետք է լիներ ինքնապաշտպանության դիմելը։

ГЕРОИЧЕСКОЕ СОПРОТИВЛЕНИЕ ВАНА 1915 Г. В ИНОСТРАННЫХ ИСТОЧНИКАХ

Р. О. СААКЯН

Резюме

Авторы приводимых в статье сообщений (немцы, американцы и др.) были очевидцами жестоких оборонительных боев, которые вели жители города Вана. Все они единогласно утверждают, что турецкие регулярные войска атаковали с намерением уничтожить армянское население города, а армяне только оборонялись. Жители Вана с 7 апреля по 6 мая 1915 г. оказывали вооруженное сопротивление войскам. Благодаря своевременной помощи русской армии и армянских добровольческих отрядов они спаслись от неминуемой смерти. Беспочвенны утверждения турецких историков с том, что в Ване имело место «восстание», которое способствовало продвижению русской армии.

THE 1915 HEROIC RESISTANCE OF VAN AS HIGHLIGHTED BY FOREIGN SOURCES

SAHAKIAN R. O.

Summary

The authors of the information presented in the article (Germans, Amer cans and others) have been eyewitnesses of the fierce defence battles faught by the inhabitants of Van. All of them insist that a regular Turkish army attacked the Armenian inhabitants of the town intending to annihilate them while the Armenians only defended themselves. Thanks to the timely help provided by the Russian army and Armenian volunteer detachments, they were saved from sure death. Baseless is the insistance by Turkish historians that a „revolt" took place in Van and it favoured the advance of the Russian army.

---

69 *Նույն տեղում, էջ 335։*

70 *Նույն տեղում, էջ 298։*